



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ  
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ  
(AMICUS CURIAE) № 08/20

14.05.2020 թ.

ք. Երևան

«Արզնի գրուպ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Դիմող) դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 5-րդ մասի և «Սնանկության մասի» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի ՀՀ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու խնդրանքով:

Մասնավորապես, Դիմողը վիճարկել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 5-րդ մասի և «Սնանկության մասի» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 10-րդ, 11-րդ, 59-րդ, 60-րդ, 75-րդ, 78-րդ հոդվածների պահանջներին:

Այսպես, «Արզնի Գրուպ» ՍՊ ընկերությունը 2018 թվականին սեպտեմբերի 3-ին հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ Դատարան) ընդդեմ «Կրեդիտ Բանկ» Ս.Ա.Լ. ընկերության և պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ «Սթար Դիվայդ» ՍՊ ընկերության՝ գումարի բռնագանձման պահանջի մասին:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2018 թվականի սեպտեմբերի 18-ի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» թիվ ԵԴ/19084/02/18 որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

2018 թվականի հոկտեմբերի 26-ին Դիմողը կրկին ներկայացրել է հայցադիմում՝ ավելացնելով տնօրենի անձնագրային տվյալները, հայցադիմումին կցելով վերջինիս անձը հաստատող փաստաթղթի պատճենը, ինչպես նաև, ի հիմնավորումն պետական տուրքը հետաձգելու միջնորդության, կցել է Ընկերությանը սնանկ ճանաչելու մասին Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2018 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ ԿԴ1/0052/04/18 վճռի պատճենը:

Դատարանը 2018 թվականի նոյեմբերի 6-ին կայացրած «Հայցադիմումը վերադարձնելու մասին» թիվ ԵԴ/19084/02/18 որոշմամբ կրկին վերադարձրել է հայցադիմումը՝ նշելով «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ սնանկ ճանաչված ֆիզիկական կամ իրավաբանական անձանց շահերը օրենքով նախատեսված դեպքերում ներկայացնում է սնանկության կառավարիչը: «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի համաձայն՝ սնանկության վերաբերյալ գործով նշանակված կառավարիչը՝ պարտապանի անունից դիմում է դատարաններ՝ դատական կարգով լուծում պահանջող հարցերով, ...»:

Դիմողը 2018 թվականի նոյեմբերի 23-ին հայացադիմումը կրկին ներկայացրել է Դատարան:

Դատարանը 2018 թվականի դեկտեմբերի 4-ին նորից կայացրել է «Հայացադիմումը վերադարձնելու մասին» որոշում:

Դիմողը սահմանված ժամկետում ներակայացրել է վերաքննիչ բողոք:

ՀՀ վերաքննիչ դատարանը 2019 թվականի փետրվարի 19-ի թիվ ԵԴ/19084/02/18 որոշմամբ մերժել է Ընկերության վերաքննիչ բողոքը՝ նշելով հետևյալը. «Վերաքննիչ դատարանը փաստում է, որ օրենսդիրը նախատեսելով դատական կարգով լուծում պահանջող հարցերով դատարան դիմելու սնանկության գործով կառավարչի պարտականությունը, այն հստակ սահմանել է որպես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի իմաստով օրենքով ուղղակի նախատեսված դեպք: Ընդ որում, նշված կանոնից նախատեսված չէ որևէ բացառություն, որը հնարավորություն կընձեռեր ոչ միայն սնանկության գործով կառավարչին, այլ նաև իրավաբանական անձի տնօրենին հայց ներկայացնելու սնանկ ճանաչված լինելուց հետո: Մասնավորապես՝ իրավական դրույթը ձևակերպված է ոչ թե «նաև» եզրույթի կիրառմամբ, այլ բացառապես սնանկության կառավարչի նման լիազորության փոխանցմամբ: Նշվածն ուղղակիորեն պայմանավորված է սնանկության վարույթի առանձնահատկություններով, ինչպես պարտավորությունների, այնպես էլ դրանց ուղղվող և պարտապանի միջոցների կենտրոնացմամբ և պահանջների առավելագույն բավարարման սկզբունքներով: Այսինքն՝ իրավաբանական անձի տնօրենի կողմից սնանկ ճանաչված լինելու դեպքում հայց ներկայացնելու արգելքը հետևում է հենց այն կանոնին, որ այդ պահից սկսած ծագում է սնանկության գործով կառավարչի պարտականությունը՝ դատական կարգով լուծում պահանջող հարցերով դատարան դիմելու:»:

Նշված որոշման դեմ սահմանված ժամկետում ներկայացվել է վճռաբեկ բողոք:

ՀՀ վճռաբեկ դատարանի 2019 թվականի հունիսի 12-ի թիվ ԵԴ/19084/02/18 որոշմամբ ներկայացված վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

Ընկերությունը սահմանված ժամկետում կրկին ներկայացրել է վճռաբեկ բողոք:

ՀՀ վճռաբեկ դատարանը 2019 թվականի հուլիսի 24-ին կայացրել է «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին» թիվ ԵԴ/19084/02/18 որոշումը:

Ըստ Դիմողի՝

- անձի սնանկ ճանաչված լինելու հանգամանքը դատարան դիմելու իրավունքի սահմանափակման հիմք չէ.

- սնանկ ճանաչված անձն օժտված է դատավարական իրավասուբյեկտիվությամբ և վերջինիս դատական պաշտպանության իրավունքի իրացումը չպետք է կապվի մեկ այլ սուբյեկտի՝ սնանկության գործով կառավարչի հետ:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի համակարգային վերլուծությունը թույլ է տալիս պնդելու, որ դատարան դիմելու կամ արդարադատության մատչելիության իրավունքը մարդու սահմանադրաիրավական և միջազգային իրավական նորմերով երաշխավորված դատական պաշտպանության արդար դատաքննության հիմնարար իրավունքների կարևորագույն բաղադրիչն է:

ՀՀ Սահմանադրական դատարանը, մի շարք որոշումներով (10.12.2013 թվականի թիվ ՄԴՈ-1127, 10.02.2015 թվականի թիվ ՄԴՈ-1190, 03.03.2015 թվականի թիվ ՄԴՈ-1192, 16.06.2015 թվականի թիվ ՄԴՈ-1220, 26.06.2016 թվականի թիվ 1222, 10.03.2016 թվականի թիվ ՄԴՈ-1257 և այլն) անդրադառնալով արդարադատության մատչելիության, արդար և արդյունավետ դատաքննության իրավունքների երաշխավորման սահմանադրական իրավաչափության խնդիրներին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստազրկել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ, ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում, դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը:

ՀՀ Սահմանադրական դատարանը, անդրադառնալով դատական պաշտպանության իրավունքի էությանը, 2007 թվականի նոյեմբերի 28-ի ՄԴՈ-719 որոշմամբ արձանագրել է հետևյալը. «Հայցը կամ դիմումը դատարան իրավական պաշտպանության այն միջոցներն են, որոնցով հիմնական իրավունքների, այդ թվում դատական պաշտպանության իրավունքի կրող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պաշտպանվում է իր իրավունքների տարաբնույթ խախտումներից, որոնք կարող են կատարվել ինչպես հանրային իշխանության, այնպես էլ մասնավոր անձանց կողմից: Իշխանության ոտնձգություններից անձի պաշտպանվելու ամենաարդյունավետ միջոցը դատարան դիմելու նրա իրավունքն է, որը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես և բոլոր այլ իրավական պետություններում, ունի սահմանադրական (հիմնարար) իրավունքի բնույթ (ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մաս):

Մյուս կողմից, դատական իշխանությունը միակ իշխանությունն է, որն ինքն է ունակ և պարտավոր վերահսկելու իրեն, այսինքն՝ վերադաս աստիճանների դատարանները պարտավոր են վերացնել ավելի ստորին աստիճանների թույլ տված դատական սխալները: Սակայն իրեն ուղղված դիմումների հանդեպ դատարանի կողմից անգործություն ցուցաբերելը, ըստ էության, խաթարում է դատական պաշտպանության իրավունքի

Էությունը: Նման մոտեցումն անհնարին է դարձնում արդարադատությունը, այն դառնում է անձանց համար ոչ մատչելի: Նման իրավիճակն անհամատեղելի է իրավական պետության սահմանադրաիրավական սկզբունքների հետ:»:

Թեև դատարանի մատչելիության իրավունքը ուղղակիորեն ամրագրված չէ Կոնվենցիայի 6-րդ հոդվածում, սակայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) այն ճանաչել է որպես արդար դատաքննության իրավունքի անբաժանելի տարր:

Մինչդեռ, Եվրոպական դատարանի տեսանկյունից դատարանի իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ, և այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Սակայն դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ չխախտի կամ գրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը (տե՛ս Toltoy Miloslavsky v. The United Kingdom (181.39/1) գործով Եվրոպական դատարանի 13.07.1995 վճիռը, 59-րդ կետ):

Փաստորեն, անձը կարող է իրացնել դատարանի մատչելիության իր իրավունքը միայն այն դեպքում, երբ դատարանի առջև վերջինիս բարձրացրած հարցը (որպես կանոն՝ իրավունքի մասին վեճը) ենթակա է քննության և լուծման դատարանի կողմից: Մինչդեռ այն պարագայում, երբ դատարանի կողմից իրավական հիմքերի բացակայության պայմաններում և առանց իրավաչափ, բավարար հիմնավորման առկայության մերժվում է բողոքի վարույթ ընդունումը՝ խախտվում է անձի դատական պաշտպանության, դատարանի մատչելիության իրավունքը:

Դիմողը, վիճարկվող իրավական նորմերը վերլուծելով ՀՀ Սահմանադրական դատարանի վերը նշված որոշումների լույսի ներքո, հանգում է հետևյալ եզրակացության.

Նախ, սնանկության կառավարիչը ներկայացնում է սնանկ ճանաչված անձի շահերը բացառապես օրենքով նախատեսված դեպքերում: Դատարանը Որոշման մեջ չի հստակեցրել, թե սույն գործով որն է օրենքով նախատեսված այն դեպքը, որի առկայության պարագայում կառավարիչը պետք է ներկայացնի ընկերության շահերը: Նշված հանգամանքին ՀՀ վերաքննիչ դատարանի որոշման մեջ որևէ անդրադարձ առկա չէ: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 5-րդ մասում թեև նշված է սնանկության կառավարչի՝ օրենքով նախատեսված դեպքերում պարտապանի շահերը ներկայացնելու իրավունքը, սակայն հստակեցված չեն այն իրավիճակները, որոնց պայմաններում վերջինս պետք է օգտվի նման իրավական հնարավորությունից: Մասնավորապես՝ օրենքով հստակ և սպառիչ կերպով սահմանված չեն այն դեպքերը, որոնց պարագայում կիրառելի է նշված նորմը, ինչը, առավել քան խոցելի է դառնում իրավական որոշակիության տեսանկյունից:

Երկրորդ, ըստ Դիմողի՝ վիճարկվող իրավական նորմերով ամրագրված չէ սնանկ ճանաչված անձի դատական պաշտպանության իրավունքի սահմանափակում, մինչդեռ իրավակիրառ պրակտիկայում ընկալումն այլ է: Դիմողի համոզմամբ սնանկության կառավարչի, որպես ներկայացուցիչ, հանդես գալու իրավունքը դեռևս չի նշանակում, որ

Ընկերությունը, ի դեմս տնօրենի, գրկված է դատարան դիմելու իրավական հնարավորությունից: Խնդիրն իրականում շատ ավելի տեսական և խորքային բնույթ ունի՝ կախված սնանկության կառավարչի և սնանկ ճանաչված իրավաբանական անձի իրավական կարգավիճակից, դրանց իրավասուբյեկտությունից, դատարանում որպես առանձին սուբյեկտ հանդես գալու, հայցադիմում ներկայացնելու իրավական հնարավորությունից:

Վերաքննիչ դատարանի որոշման հիմքում դրված տրամաբանությունը կարող էր իրավաչափ համարվել այն պարագայում, երբ օրենսդիրը, նախատեսելով սնանկության կառավարչի՝ որպես ներկայացուցիչ հանդես գալու իրավունքը, միևնույն ժամանակ բացառեր այլ սուբյեկտի, օրինակ ընկերության տնօրենի ընկերության անունից հանդես գալու իրավական հնարավորությունը՝ սահմանափակելով ընկերության իրավասուբյեկտությունը, այդ թվում՝ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը:

Ըստ էության, վերաքննիչ դատարանը իր որոշման պատաճառաբանական մասում հանգել է այն եզրակացության, որ սնանկ ճանաչված ընկերությունը չունի դատարավարական իրավասուբյեկտություն, չի կարող հայց ներկայացնել դատարան և միայն սնանկության գործով կառավարիչն է օժտված նման դատավարական իրավասուբյեկտությամբ:

**Հարց է առաջանում, թե նման պայմաններում ինչպես պետք է սնանկ ճանաչված ընկերությունը բողոք ներկայացնի սնանկության գործով կառավարչի դեմ կամ հայցադիմում ներկայացնի դատարան՝ սնանկության գործով կառավարչին ընդգրկելով որպես պատասխանող, կամ ինչպես պետք է վարվի սնանկ ճանաչված ընկերությունը, երբ սնանկության գործով կառավարիչը հրաժարվում է ստորագրել հայցադիմումը, ինչը և տեղի է ունեցել սույն դեպքում:**

Երրորդ, վիճարկվող իրավանորմերի սահմանադրականության խնդրի լուծման համար էական նշանակություն ունի սնանկ ճանաչված անձի և սնանկության գործով կառավարչի դատավարական իրավասուբյեկտության ծավալի և բովանդակության բացահայտումը:

Մինչդեռ վիճարկվող դրույթներին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ ըստ էության սահմանափակվել է սնանկ ճանաչված անձի և սնանկության գործով կառավարչի դատավարական իրավասուբյեկտությունը: Մասնավորապես՝ մի կողմից սնանկ ճանաչված անձն ինքնուրույն չի կարող օգտվել դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից, մյուս կողմից սնանկության գործով կառավարիչը կարող է հանդես գալ բացառապես սնանկ ճանաչված անձի անունից, այսինքն՝ ըստ ձևավորված իրավակիրառ պրակտիկայի վերջինս չունի դատավարական ինքնուրույն իրավասուբյեկտություն:

Ելնելով վերոգրյալից՝ դիմողը խնդրել է որոշել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 5-րդ մասի և «Սնանկության մասի» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի ՀՀ Սահմանադրությանը համապատասխանությունը:

## ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Այսպես, Դիմողը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 5-րդ մասի և «Մանկության մասի» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը հակասում են ՀՀ Սահմանադրության 10-րդ, 11-րդ, 59-րդ, 60-րդ, 75-րդ, 78-րդ հոդվածների պահանջներին:

ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի համաձայն՝

*1. Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը:*

*2. Ընդերքը և ջրային ռեսուրսները պետության բացառիկ սեփականությունն են:*

ՀՀ Սահմանադրության 11-րդ հոդվածի համաձայն՝

*Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը հիմնված է մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա և պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը:*

ՀՀ Սահմանադրության 59-րդ հոդվածի համաձայն՝

*1. Յուրաքանչյուր ոք ունի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Այս իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:*

*2. Մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով՝ հանրային շահերի պաշտպանության նպատակով:*

*3. Շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը, անբարեխիղճ մրցակցությունը և հակամրցակցային համաձայնություններն արգելվում են:*

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝

*1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:*

*2. Ժառանգելու իրավունքը երաշխավորվում է:*

*3. Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:*

*4. Ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:*

*5. Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ:*

*6. Հողի սեփականության իրավունքից չեն օգտվում օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:*

*7. Մտավոր սեփականությունը պաշտպանվում է օրենքով:*

8. Յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

ՀՀ Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն՝

Հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:

ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝

Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Վիճարկվող իրավակարգավորումների բովանդակությունը հետևյալն է.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝

5. Մնանկ ճանաչված ֆիզիկական կամ իրավաբանական անձանց շահերը օրենքով նախատեսված դեպքերում ներկայացնում է սնանկության կառավարիչը: Լուծարման գործընթացում գտնվող իրավաբանական անձանց շահերը ներկայացնում է լուծարային հանձնաժողովի նախագահը:

«Մնանկության մասի» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի համաձայն՝

1. Մնանկության վերաբերյալ գործով նշանակված կառավարիչը՝

գ) պարտապանի անունից դիմում է դատարաններ՝ դատական կարգով լուծում պահանջող հարցերով, ներգրավվում է պարտապանի այն դատավարություններում, որոնցում վերջինս հանդես է գալիս որպես հայցվոր, պատասխանող կամ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձ, առանց լիազորագրի հանդես է գալիս պարտապանի անունից:

Այսպես, վիճարկով դրույթների սահմանադրականությունը վիճարկելու խնդիրը առաջացել է այն բանից հետո, երբ «Արզնի գրուպ» ՍՊ ընկերությունը հայցադիմում է ներկայացրել դատարան՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, իսկ Ընկերության սնանկության գործով կառավարիչը հրաժարվել է հայցադիմումը ստորագրելուց:

Դատական տեղեկատվական համակարգում առկա գործերի ուսումնասիրության արդյունքում պարզեցինք, որ՝

1. Ընկերությունը 06.09.2018 թվականին հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ «Կրեդիտ Բանկ» Ս.Ա.Լ-ի և «Մթար Դիվայր» ՓԲ ընկերության՝ գումարի բռնագանձման պահանջի մասին:

2. «Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲ ընկերությունը 30.05.2018 թվականին դիմում է ներկայացրել Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան «Արզնի Գրուպ» ՍՊ ընկերությանը սնանկ ճանաչելու մասին: ՀՀ Կոտայքի մարզի

ընդհանուր իրավասության դատարանի 04.06.2018 թվականի որոշմամբ սնանկության վերաբերյալ դիմումը վերադարձվել է «Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲ ընկերությունը 25.06.2018 թվականին կրկին դիմում է ներկայացրել Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան, որը 25.06.2018 թվականի որոշմամբ ընդունվել է վարույթ, նշանակվել է սնանկության գործով ժամանակավոր կառավարիչ:

3. 17.09.2018 թվականի թիվ ԿԴ1/0052/04/18 վճռով Ընկերությունը ճանաչվել է սնանկ: Այսինքն՝ գումարի բռնագանձման պահանջի մասին հայցադիմումը Ընկերության կողմից ներկայացվել է այն ժամանակ, երբ դեռ թիվ ԿԴ1/0052/04/18 սնանկության գործով վերջնական դատական ակտ կայացված չէր:

Տվյալ պարագայում անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ թիվ ԵԿԴ/0282/02/12 քաղաքացիական գործով 2013 թվականի նոյեմբերի 29-ին ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կայացված որոշմանը. ««Սնանկության մասին» ՀՀ օրենքը սնանկության վարույթի տարբեր փուլերում նախատեսել է սնանկության ժամանակավոր կառավարչի և կառավարչի մասնակցությունը, որոնք սնանկության իրավահարաբերությունների տարբեր սուբյեկտներ են՝ ինքնուրույն գործառույթներով:»

«... սնանկության ժամանակավոր կառավարչի լիազորությունները, ի տարբերություն սնանկության կառավարչի, սահմանափակ են և կրում են սպառիչ բնույթ: Մասնավորապես, սնանկության ժամանակավոր կառավարիչն իրականացնում է հետևյալ լիազորությունները՝ **կազմակերպում է գույքագրում, միջոցներ է ձեռնարկում պարտապանին պատկանող գույքի պահպանության ապահովման համար, ինչպես նաև վերլուծում է պարտապանի ֆինանսական վիճակը, սնանկության պատճառները, ինչպես նաև պարտապանի ֆինանսական, տնտեսական և ներդրումային գործունեությունը և նրա դրությունն ապրանքային շուկայում:** Օրենսդրական նման կարգավորումը պայմանավորված է մինչ սնանկ ճանաչվելը և սնանկ ճանաչվելուց հետո պարտապանի իրավական կարգավիճակի առանձնահատկություններով: **Մինչ սնանկ ճանաչվելը պարտապանն ինքնուրույն է իրացնում իր իրավունքները և պարտականությունները, այդ թվում նաև՝ դատավարական, հետևաբար օրենսդիրը սնանկության ժամանակավոր կառավարչին վերապահել է սահմանափակ լիազորություններ:** Մինչդեռ, սնանկ ճանաչվելուց հետո պարտապանի որոշ իրավունքներ, այդ թվում նաև՝ դատավարական, իրացնում է կառավարիչը: Մասնավորապես, վերջինս պարտապանի անունից դիմում է դատարաններ՝ դատական կարգով լուծում պահանջող հարցերով, ներգրավվում է պարտապանի այն դատավարություններում, որոնցում վերջինս հանդես է գալիս որպես հայցվոր, պատասխանող կամ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձ, առանց լիազորագրի հանդես է գալիս պարտապանի անունից:

Վերը շարադրվածի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սնանկության ժամանակավոր կառավարիչն **օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում օժտված չէ** դատավարական իրավունակությամբ, հետևաբար նաև՝ վերաքննիչ բողոք ներկայացնելու իրավունքով, և պարտապանի մասնակցությամբ դատավարություններում նրան ներգրավելու անհրաժեշտությունը բացակայում է:»:



Այսինքն՝ մինչև սնանկության գործով վերջնական դատական ակտի կայացումը՝ սահմանափակված չէ այն անձանց դատավարական իրավասութեկտությունը, ում վերաբերյալ հարուցված է սնանկության վարույթը: Ստացվում է, որ եթե ի սկզբանե Ընկերության կողմից գումարի բռնագանձման պահանջի մասին հայցադիմումը ներկայացվեր օրենքի պահանջներին համապատասխան, ընդ որում ստորագրված Ընկերության տնօրենի կողմից, այն կընդունվեր վարույթ, քանի որ Ընկերությունը դեռևս սնանկ չէր ճանաչվել, սնանկության գործով կառավարիչ չկար նշանակված, ուստի սահմանափակված չէր Ընկերության դատավարական իրավասութեկտությունը:

Ինչ վերաբերում է Հայցադիմումը վերադարձնելուց հետո սնանկության գործով կառավարչի կողմից նշված հայցադիմումը ստորագրելուց հրաժարվելու հանգամանքին, և Դիմողի այն պնդմանը, որ դրանով խախտվում են իր սահմանադրական իրավունքները, ապա նշենք, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *պարտապանը և պարտատերը (պարտատերերը) կարող են սնանկության գործը վարող դատավորին բողոքարկել կառավարչի գործողությունները կամ անգործությունը: Բողոքը կարող է դատարան ներկայացվել այն օրվանից սկսած 10 օրվա ընթացքում, երբ բողոքարկողը իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին:*

Բացի այդ, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված են սնանկության կառավարչի լիազորությունները (այդ թվում՝ Դիմողի կողմից վիճարկվող դրույթը), որոնք կրում են իմպերատիվ բնույթ, այսինքն՝ պարտադիր են կատարման համար:

Իսկ նույն օրենքի 32-րդ հոդվածը նախատեսում է պատասխանատվություն կառավարչի կողմից իր լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

2011 թվականի հունվարի 11-ի թիվ ՍԴՈ-932 որոշմամբ ՀՀ Սահմանադրական դատարանը արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «Արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի տեսանկյունից հարկ է վեճի առարկա իրավունքների պաշտպանության երաշխիքները դիտարկել սնանկության վարույթին վերաբերող դատավարական այլ երաշխիքների համատեքստում, որոնք պետք է ուղղված լինեն սնանկության վարույթում ներգրավված բոլոր մասնակիցների իրավունքների և շահերի համակողմանի և հավասարակշռված պաշտպանությանը: Այս առումով, սահմանադրական դատարանի 2007 թ. նոյեմբերի 28-ի ՍԴՈ-719 որոշման լույսի ներքո գնահատելով պարտատերերի ժողովի որոշումների և սնանկության գործով կառավարչի գործողությունների բողոքարկման վարույթի բնույթը, առանձնահատկությունները, սնանկության գործի ընթացքի վրա դրանց ազդեցության աստիճանը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ պարտատերերի ժողովի որոշումների և սնանկության գործով կառավարչի գործողությունների բողոքարկման արդյունքում կայացվող որոշումներն իրենց բնույթով այնպիսին են, որ չեն կասեցնում սնանկության գործի քննության հնարավորությունը, չեն խոչընդոտում դատարանի մատչելիության իրավունքի իրացման ընթացքը, հետևաբար, ապահովում են նաև սնանկության վարույթում ներգրավված բոլոր մասնակիցների իրավունքների և շահերի համակողմանի և հավասարակշռված պաշտպանությունը»:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հանգում ենք այն եզրակացության, որ օրենսդիրը, սահմանափակելով սնանկ ճանաչված անձի դատավարական իրավասուբյեկտությունը, միաժամանակ երաշխիքներ է ստեղծել վերջինիս իրավունքները սնանկության կառավարչի կողմից պատշաճ իրացնելու համար:

Ավելին, պարտապանին իրավունք է վերապահել բողոքարկել կառավարչի գործողությունները կամ անգործությունը սնանկության գործը վարող դատավորին՝ այդ կերպ պարտապանին ընձեռելով կառավարչի հակաիրավական գործողություններից և անգործությունից պաշտպանվելու գործուն մեխանիզմներ:

**Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.**

- ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 5-րդ մասի և «Մնանկության մասի» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:

**Համակարգող՝**

**Լյուդվիկ Դավթյան**